

պիսկոպոսը այդ ոգւով է որ Ս. Քաղաքի ուխտատեղիներու իր Յուցակին մէջ նոյն տեղը հետեւեալ կերպով կը յիշատակէ. «Քարայրն ուր առաքեալն անցիկն: Ծերադրութեան տեղիքն Քրիստոսի, որ է քարունկեց մի ի քարայրիկն». ըսել է թէ մինչև ժ. զարու վերջերը Ըմբռնման եկեղեցիին աւերակները կը նկատուէին Քրիստոսի մատնութեան վայրը ու վերջին գիշերուան աղօթատեղին:

Ուստի մենք կ'եզրակացնենք թէ Քրիստոսի մատնութեան ու աղօթքի տեղը չորրորդ դարէն յառաջ քրիստոնէից ուխտագնացութեան վայր մ'էր, չորրորդ դարուն շինուեցաւ հոն եկեղեցի մը բիւզանդական կայսրերէն, և սն 614ին կործանուեցաւ պարսիկ արշաւանքէն. Խաչակրաց ժամանակ ալ վերաշինուեցաւ: Սալահէտօն Երուսաղէմը գրաւեց 1187ին, և հաւանաբար, ըստ մեր կարծեաց, Ըմբռնման եկեղեցին շնորհեց հայոց, այնպէս որ՝ 1322ին, գաթալանցի ուխտաւոր Դոմինիկեանց պատմական Ուղեգրութեան համաձայն, հայք կը շարունակէին սեպհականել նոյն եկեղեցին որ կը քանդուի ժ. Դ. դարու կիսուն, որով հայք նոյն եկեղեցիին բացարձակ սեպհականատէրը եղած կ'ըլլան մեկ ու կիս դարի աւելի:



Ժ Թ

ԳԵԹՍԵՄԱՆԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ԳԵՐԵԶՄԱՆԻ ԵԿԵՂԵՑԻՆ

Երուսաղէմի մեծ եկեղեցիներէն մին է Գեթսեմանիի հնագարեան եկեղեցին, ուր կայ Ս. Կուսին գամբարանը. նոյն եկեղեցիին սեպհականութիւնը կը վերաբերի Հայոց և Յունաց. բայց Ղպտինները և Ասորիները իրր Հայոց հետեւակներ կրնան պաշտամունք կատարել հոն: Այս տողերով պիտի ջանանք բացատրել նոյն եկեղեցիին պատմական ծագումը, անոր զարգացումը, կըրած փոփոխութիւնները այլևայլ ժամանակներու մէջ, և յետոյ նկարագրել անոր վերաբերեալ հայկական յիշատակները: